ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ,
ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ

«ԵՐԵՎԱՆԻ ՊԱՐԱՐՎԵՍՏԻ ՊԵՏԱԿԱՆ
ՔՈԼԵՋ» ՊՈԱԿ

РЕСПУБЛИКА АРМЕНИЯ
МИНИСТЕРСТВО ОБРАЗОВАНИЯ, НАУКИ,
КУЛЬТУРЫ И СПОРТА

ГНКО "ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ
ХОРЕОГРАФИЧЕСКИЙ КОЛЛЕДЖ"

REPUBLIC OF ARMENIA MINISTRY OF EDUCATION, SIENCE, CULTURE AND SPORT
"YEREVAN DANCING ART STATE COLLEGE" NCSO

Երևան, 375009, Բայրոնի փող. 5
Հեռ./ֆաքս՝ (374 10) 56-44-26

5 Byron St., Yerevan, 375009
Tel.:/ fax: (374 10) 56-44-26

Ереван, 375009, ул. Байрона, 5
Тел./факс: (374 10) 56-44-26

№ 1/5-58-22
12.09.2022թ

"Ղահրաման" ՍՊԸ տնօրեն
պարոն Մ. Հասանյանին

Հարգելի պարոն Հասանյան

Տեղեկացնում ենք Ձեզ, որ "Երևանի պարարվեստի պետական քոլեջ" ՊՈԱԿ-ի և "Ղահրաման" ՍՊԸ-ի միջև 23.12.2021թ. կնքված թիվ ԵՊՊՔ-ԳՀԱՊՁԲ-22/1 պայմանագրի համաձայն /այսուհետ Պայմանագիր/ Ձեր ընկերությունը մինչև սույն թվականի սեպտեմբերի 09-ը պետք է մատակարարեր հետևյալ ապրանքները.

- Սպագետի -3 կգ
- Կաթ - 20 լ
- Բրինձ երկար – 3 կգ
- Քաղցր եգիպտացորեն - 5.1 կգ

09.09.2022թ. Ձեր ընկերությանը գրավոր զգուշացվել է, որ մեկ օրվա ընթացքում կատարեն վերը նշված ապրանքի մատակարարումը, որը առ 12.09.2022թ. չի կատարվել:

Հիմք ընդունելով Պայմանագրի 2.1.7 կետի պահանջը՝ "Երևանի պարարվեստի պետական քոլեջ" ՊՈԱԿ-ը չմատակարարված ապրանքի մասով միակողմանի լուծում է Պայմանագիրը:

Տեղեկացնում եմ, որ "Ղահրաման" ՍՊԸ-ն ծանուցումը ստանալուց հետո 5 /հինգ/ բանկային օրվա ընթացքում "Երևանի պարարվեստի պետական քոլեջ" ՊՈԱԿ-ի 900018001314 հաշվեհամարին պարտավոր է փոխանցել 53.7 /հիսուներեք ամբողջ յոթ տասնորդական/ ՀՀ դրամ տույժ՝ Պայմանագրի 6.2 կետի համաձայն:

Կատարողի կողմից, որպես պայմանագրային պարտավորությունների պատշաճ կատարման ապահովում ներկայացրած որակավորման և պայմանագրի ապահովումները /տուժանքի մասին համաձայնագրեր՝ հավելված 4.2 և հավելված 5.1/, համաձայն որակավորման ապահովման 1.4 կետի և պայմանագրի ապահովման 1.4 կետի, կից վճարման պահանջագրերի հետ միասին, սահմանված

կարգով կներկայացվի ՝՝Հայբիզնեսբանկ՝՝ ՓԲԸ՝ ՝՝Երևանի պարարվեստի պետական քոլեջ՝՝ ՊՈԱԿ-ի 900018001314 հաշվեհամարին փոխանցելու նպատակով:

՝՝Ղահրաման՝՝ ՍՊԸ-ին՝ ՝՝Գնումների մասին՝՝ ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի համաձայն գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով ընկերության տնվյալները ներկայացվելու են լիազոր պետական մարմին:

Միաժամանակ տեղեկացնում ենք, որ Պայմանագիրը կհամարվի միակողմանի լուծված՝ սույն ծանուցումը Պատվիրատուի կողմից տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրվանից:

Տնօրենի Ժ/Պ *Ս. Ղազարյան*